ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1 -Ն

14.01.2020թ.

2020 ԹՎԱԿԱՆԻ ԼՈՒՍԱՀՈՎԻՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ 31.10.2019թ. ԹԻՎ 36-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Համայնքային Ծառայության մասին >> ՀՀ օրենքի 27-րդ հոդվածով <ՏԻՄ >> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ և 28 –րդ կետերով , < Նորմատիվ իրավական ակտերի մասին >> ՀՀ օրենքի 33-րդ և 37 –րդ հոդվածներով

Լուսահովիտ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Լուսահովիտ համայնքի համայնքապետարանի աշխատակազմի թվաքանակը , հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն N 1 հավելվածի :

2. ՈՒժը կորցրած համարել Լուսահովիտ համայնքի ավագանու 31.10.2019թ. << Լուսահովիտի համայնքապետարանի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին >>թիվ 36 –Ն որոշումը :

Լուսահովիտ համայնքի ավագանիներ

Ա. Գուլակյան / ստորագրություն /

Ա. Սարիատյան / ստորագրություն /

Ռ. Սարիատյան / ստորագրություն /

Ք. Բեգլարյան / ստորագրություն /

Ա. Սարիատյան / ստորագրություն /

Լուսահովիտ համայնքի ղեկավար Գ. Սարիատյան

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Լուսահովիտ համայնքի ավագանու 2020թ.

14 հունվարի N- 1 -ն որոշմամբ

# ԼՈՒՍԱՀՈՎԻՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2020 թ.

1.Աշխատակիցների թվաքանակը 5

2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| h/h | Պաշտոնի անվանումը | պաշտոնի ծածկագիրը | հաստիքային միավորը | պաշտոնային դրույքաչափերը /հհդրամ/ |
|---|---|---|---|---|
| 1. | Համայնքի ղեկավար | | 1 | 175000 |

Համայնքային ծառայության պաշտոններ

| | | | | |
|---|---|---|---|---|
| h/h | Աշխատակազմի քարտուղար | 1.2-1 | 1 | 120000 |
| 2. | Աշխատակազմի առաջատար մասնագետ | 3.1-1 | 1 | 92617 |
| 3. | Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ | 3.2-1 | 1 | 89610 |

Տեխնիկական սպասարկման անձնակազ

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Հավաքարար | | 1 | 89610 |
| Ընդամենը | | | | 566,837 |

Համայնքի ղեկավար Գ. Սարիատյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ԼՈՒՍԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 2 -Ն

14 .01. 2020 թ.

## __ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լուսահովիտի համայնքի 2020թվականի բյուջեում պետք է կատարել փոփոխություն 2019թ. տարեվերջին վարչական մասում 5,5 հազար դրամ մնացորդը պետք է տեղափոխել համայնքի 2020թ. բյուջեի ֆոնդային մաս : 2020թվ. բյուջեի դեֆիցիտը 5,5 հազար դրամի փոխարեն կկազմի 6,0 հազար դրամ :

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի և Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասինե ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով __Լուսահովիտ__ համայնքի ավագանին

Ո ր ո շ ու մ է

Հաստատել 2020 թվականի համայնքի բյուջեն՝

ա/ եկամուտների գծով 8104,0 հազար դրամ

բ/ ծախսերի գծով ---8110,0 հազար դրամ

գ/ Դեֆիցիտ ---- 6,0 հազար դրամ

Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ (հատված 1)

Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ գործառական դասակարգման՝ (հատված 2)

Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման՝ (հատված 3)

Հաստատել համայնքի բյուջեի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը)՝ (հատված 4)

Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ (հատված 5)

Հաստատել համայնքի բյուջեի բյուջեի ծախսերն ըստ գործառական և տնտեսագիտական դասակարգման՝ (հատված 6) : Սահմանել, որ

ա/ ծախսերի ֆինանսավորումը կատարվում է ստացված փաստացի մուտքերի սահմաններում՝ պահպանելով ծախսերի համամասնությունները

բ/ թույլատրել համայնքի ղեկավարին զանձապետական հաշվի 2019 թվականի տարեվերջյան ազատ մնացորդն ինքնուրույն ներառել 2020 թվականի բյուջեի եկամտային մասում և ծախսային մասում ընդգրկել առաջնահերթություն պահանջող ծախսերի ֆինանսավորման համար

գ/ ծախսերի տնտեսագիտական և գործառական դասակարգման նախատեսված հոդվածների միջև «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համապատասխան կատարվող վերաբաշխումները չեն կարող գերազանցել հաստատված ծավալի 15-%ը :

Լուսահովիտ համայնքի ավագանիներ

Ա. Գուլակյան /կողմ/ ստորագրություն

Ա. Սարհատյան / կողմ/ ստորագրություն

Ա. Սարհատյան / կողմ/ ստորագրություն

Ռ. Սարհատյան / կողմ/ ստորագրություն

Ք. Բեգլարյան /կողմ/ ստորագրություն

Լուսահովիտ համայնքի ղեկավար Գ. Սարհատյան